ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հունվարի 14-ից մինչև 2026 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի փորձագետ Արուս Աթանեսյանի՝ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ.

1) Կազմվել և մշակվել են ՀՀ վարչապետի աշխատակազմից, այլ գերատեսչություններից, միջազգային և տեղական կազմակերպություններից Նախարարություն հասցեագրված գրություններին, ինչպես նաև քաղաքացիների դիմումներին ուղղված պատասխաններ:

2) Մշակվել և ներկայացվել են մի շարք պաշտոնական գրությունների և իրավական բնույթի փաստաթղթերի նախագծեր՝ ուղղված նախարարություններին, այլ գերատեսչություններին և կազմակերպություններին:

3) Ակտիվ ներգրավվածություն է ապահովվել ՀՀ կառավարության 1997 թվականի N 330 որոշման շրջանակում իրականացվող աշխատանքներում, այդ թվում՝ շահառուների տվյալների հստակեցման, ներկայացված ցուցակների վերլուծության և համապատասխան տեղեկանքի մշակման գործընթացներում:

4) Իրականացվել է էական մասնակցություն վերադարձի և վերաինտեգրման, ինչպես նաև փախստականների ինտեգրման ոլորտներում քաղաքականությունների և ծրագրերի մշակման գործընթացներին, այդ թվում՝ համապատասխան իրավական ակտերի մշակման և բովանդակային ձևավորման աշխատանքներին:

5) Միասնական սոցիալական ծառայությանը տրամադրվել է մեթոդական և մասնագիտական աջակցություն՝ վերադարձի, վերաինտեգրման և փախստականների ինտեգրման ծրագրերի իրականացման շրջանակում:

6) Նախարարության հետ համաձայնեցված պրակտիկանտին ցուցաբերվել է մասնագիտական և մեթոդական աջակցություն՝ նրա կողմից իրականացվող

հետազոտական աշխատանքի շրջանակում, որը վերաբերում է միգրացիայի և մարդկային կապիտալի թեմային: Ապահովվել է փորձագիտական խորհրդատվություն, ինչպես նաև անցկացվել է փորձագիտական հարցազրույց, որի արդյունքները նախատեսվում են օգտագործել պրակտիկանտի ավարտական աշխատանքի մեջ:

7) Մասնակցել եմ մի շարք միջգերատեսչական հանդիպումների, քննարկումների, աշխատաժողովների, աշխատանքային խմբերի նիստերի, փորձագիտական հարցազրույցների և դասընթացների՝ ներկայացնելով ոլորտային դիրքորոշումներ և առաջարկություններ:

8) Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացվել են բաժնի գործառույթներից բխող այլ մասնագիտական աշխատանքներ:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի փորձագետ՝
Արուս Աթանեսյան